

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

Ընդունված է -----

**«ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՉԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

Հոդված 1. «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի (5 դեկտեմբերի 2000 թվականի, այսուհետև՝ օրենք) 2-րդ հոդվածի՝

1-ին մասի ա) կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

ա) գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 10 մարդ, իսկ միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալը և (կամ) միջին տարեկան հաշվեկշռի գումարը՝ մինչև 100 մլն դրամ.

1-ին մասի բ) կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

բ) փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, իսկ միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալը և (կամ) միջին տարեկան հաշվեկշռի գումարը՝ մինչև 500 մլն դրամ.

1-ին մասի գ) կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

գ) միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչև 250 մարդ, իսկ միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալը՝ մինչև 1500 մլն դրամ և (կամ) միջին տարեկան հաշվեկշռի գումարը՝ մինչև 1000 մլն դրամ:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին պարբերության 2-րդ նախադասությունը «մշակում» բառից հետո լրացնել «և հաստատում» բառերով:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ս. Սարգսյան

2008թ. _____
Երևան
ՀՕ- ... -Ն